




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

И-30

ՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ № 28

Գ. ՍԱՖՐԱԶԲԵԳՅԱՆ

ՄԻ ԶՐՈՒՅՑ ≡
 ≡ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ



№ 273

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1925

MAR 2010

Պրոկտորներ բոլոր յերկրների, միացե՛ք

Գ. ՍԱՖ.

355.1

U-30

պ

ՄԻ ԶՐՈՒՅՑ

ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

1006



Հանրային IV սպարանգի կենդանական

1925

15820-457

ՄԻ ԶՐՈՒՅՑ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի հեղափոխութիւն
միայն այն դեպքում եւ ար-
ժեքավոր, յերբ կարողա-
նում եւ պաշտպանվել:

ԼԵՆԻՆ

Մեր Խորհրդային Միութիւնը միակ յեր-
կիրն եւ, վորտեղ իշխանութիւնը գտնվում եւ
բանվորների և գյուղացիների ձեռքին:

1917 թվի հոկտեմբերին բանվորներն ու
գյուղացիները վերցրին իշխանութիւնը, քշեցին
կալվածատերերին ու բուրժուաներին: Հողատերը
զրկվեց հողից, գավոգատերը՝ գավոզից ու սրանց
ծառա-մենշնիկ և եսերները՝ իրենց փափուկ ու
հանգիստ կյանքից: Եղ բոլոր հակահեղափոխա-
կանները միացրին իրենց ամբողջ ուժը, վոր-
պեսզի նորից հետ խլեն կորցրած իշխանութիւնը,
սկսեցին կռիւ մեր դեմ: Այդ կռիւում նրանք
մենակ չեյին, նրանց ոգնում էին ամբողջ աշ-
խարհի բուրժուաները. բոլոր յերկրների հա-

ըուսաները գիտեյին, վոր միևնույն որը նրանց առաջն ել կըգա, վոր նույն «ոյինը» իրենցյերկըրի բանվորներն ու գյուղացիները պիտի խաղան և իրենց գլխին, դրա համար ել վախենում եյին:

Ամբողջ աշխարհի բոլոր տեսակի հակահեղափոխականները միացան մեր յերկրից փախած թշնամիների հետ, վորպեսզի նորից ճնշեն բանվորին և գյուղացուն, նորից յետ խլել իրենց իրավունքները և իշխանութիւնը: Բայց բանվորի և գյուղացու մաճի ու կռանի սովոր կոշտ ձեռքերից դժվար ե իշխանութիւնը խլել, են ել են բանվորի ու գյուղացու ձեռքից, վորն արդեն ճանաչել եր իր թշնամիներին, առել եր նըրանց հոտն ու համը և գիտեր, թե ինչ պտուղ են նրանք:

Ռուսաստանի բանվորն ու գյուղացին մենակ չեյին. նրանց հեղափոխական գործին ուշադրութեամբ հետևում եյին ամբողջ աշխարհի բանվորութիւնն ու գիտակից գյուղացիութիւնը: Նրանք իրենց ույժերի չափ ոգնում եյին, վորպեսզի մեր գործերը հաջող գնան, և, իսկապես, մեր գործերը հաջող եյին: Ի՞նչու:

Վորովհետեւ իրենց դասակարգային կրօնով բանվորն ու գիտակից գյուղացին կազմակերպված եյին, վորովհետեւ նրանց ղեկավարը

Կոմունիստական կուսակցութիւնն եր: Ինչ ել անեյին մեր բեռավիճերը Լենինի կուսակցութեանը հեղափոխութեան հանապարհից չեյին կարող հանել, չեյին կարող վախեցնել:

Կոմունիստական կուսակցութիւնը տասնյակ տարիներ կովել ե բանվորութեան շահերի համար, տասնյակ տարիներ շեշտել ե բանվորի և աշխատավոր գյուղացիութեան սերտ կապի նշանակութիւնը և ույժը: Նա միշտ հիշեցրել ե, վոր առանց ուժեղ կազմակերպութեան բանվորն ու գյուղացին անգոր կըլինեն, վոր միայն զինված ապստամբութեան, փառացիական պատերազմի միջոցով ե, վոր կարելի յե տալալել հարուստների իշխանութիւնն ու հաստատել բանվոր-գյուղացիական իշխանութիւնը:

«Այսպիսի հեղափոխութիւն, վոր կատարելուց հետո կարելի լինել զնել ցրպանում յեվ հանգիստ ֆնել՝ պատմութեան մեջ չե յեղել» — ասում եր ընկ. Լենինը՝ Կոմունիստական կուսակցութեան հիմնադիրը, տասնյակ միլիոնավոր աշխատավորութեան ղեկավարը:

Յեւ վորչափ շատ եյին մեր թշնամիները, այնչափ ավելի ու ավելի բանվորն ու գյուղացին լարում եյին իրենց ույժերը, վորպեսզի պաշտպանեն իրենց նվաճումները: Իսկ այդ անելու

համար անհրաժեշտ եր սեղծել դասակարգա-
յին հոգով կրթված, հեղափոխության գործին
նվիրված գիտակից Կարմիր բանակ:

Դուք բոլորդ բանակի մասին գաղափար ու-
նեք: Դժվար ե գտնել գյուղ, վորտեղից տաս-
նյակներով գնացած չլինեյին բանակ ծառայելու:
Բայց գնացողների մեծ մասը ծառայել ե նախ-
կին բանակներում, գլխավորապես՝ ցարական բա-
նակում: Կարմիր բանակի մեջ ծառայել ե մի-
այն գյուղի յերիտասարդությունը: Այդ ե պատ-
ճառը, վոր մեզ մոտ շատ գյուղերում, շատ
վայրերում, մանավանդ, յեթե նրանք հեռու չեն
կենտրոններից, Կարմիր բանակի մասին պարզ
գաղափար չունեն: Աշխատավոր գյուղացիներից
շատերը գեռ լավ չեն հասկացել, թե մեր Կար-
միր բանակը վորքան տարբերվում ե յեվ վոչ մի
նվաճություն չունի նիւ բանակի հետ: Իսկ Խոր-
հրդային Ռուսաստանում, վորտեղ բանակը 7
տարուց ավել ե, վոր գոյութիւն ունի, արդեն
լավ են ճանաչում նրան: Մեր ամեն մի բանվո-
րը, ամեն մի գյուղացին, խորհրդային յերկրի
ամեն մի քաղաքացի պետք ե պարզ գիտակցի
տարբերութիւնը նախկին բանակների, բուր-
ժուական յերկրների բանակների և մեր Կարմիր
բանակի մեջ:

Չեք ցույց տա մի պետութիւն, վորն իր
բանակը չունենա: Տիրող դասակարգը կազմա-
կերպում ե իր բանակն ի՛ր շահերի պաշտպա-
նության համար:

Յեթե իշխանութիւնը հողատերերի ձեռքին
ե, նրանք կազմակերպում են բանակ իրենց հո-
ղատիրական շահերը պաշտպանելու համար. յե-
թե փողատերերը, ֆաբրիկանոններն են կանգ-
նած իշխանութիւն գլուխը՝ նրանք են կազմա-
կերպում իրենց շահերը պաշտպանող բանակ:

Այժմ, յերբ մեր յերկրում իշխանությունը
գտնվում ե բանվորների յեվ գյուղացիների ձեռ-
քում, մենք ել պետք ե մեր շահերի պաշտպանու-
թյան համար ունենանք մեր զորքը, մեր զինված
ույժը: Առանց դրան չի կարելի պաշտպանվել
այն վտանգութիւններից, վոր պետք ե սպա-
սել ամեն մի բնակիչ մեր դասակարգային թշնա-
միների կողմից:

Յեթե մի բնակիչ կրկնակածք այս մտքի
ճիշտ լինելուն, հիշեցեք, թե յերբ, ո՞վ և ի՞նչու յե
գործադրում իր զորքը, իր զինված ույժը: Ան-
գլխիական բուրժուական իր զորքի միջոցով ահ
ու սարսափի տակ ե պահում հնդիկ ժողովրդին:
Գերմանացի բուրժուական նույնն եր անում, իսկ
1914—18 թվի համաշխարհային պատերազմում

պարավելուց հետո իր զինված ույժի միջոցով ճնշում է բանվորական մասսաների հեղափոխական շարժումը, գնդակահարում է նրանց ղեկավարներին: Նույնն են անում և մյուս բուրժուական պետությունները: Հեռու չգնանք ցարական բանակը գնդակահարում էր հեղափոխական բանվորներին (հիշեցեք թեկուզ 1905 թվի հեղափոխությունը, 1912 թվի Լենայի զեպքերը), անխընա կերպով ճնշում Ռուսաստանի զանազան անկյուններում տեղի ունեցող գյուղացիական ապստամբությունները:

Դաշնակցական խմբերը ճնշեցին մայիսյան ապստամբությունը, գնդակահարեցին անխնա կերպով Հայաստանի բանվորության և գյուղացիության լավագույն զավակներին... և այսպիսի որինակներ կարելի չե թվել անվերջ ու անհամար: Բաց արեք թերթերի վոր համարը ուզում ե լինի և դուք այդտեղ կրկարդաք տասնյակ այսպիսի որինակների մասին:

Միայն Խորհրդային իշխանությունն է, վոր գեմբը գործադրում է վոչ քե բանվորների յեվ գյուղացիների դեմ, այլ նրանց պաշտպանության համար: Վոչ վոք չի կարող ժխտել այն, վոր բանակը ծառայում է տիրող դասակարգի շահերին: Նրա միջոցով պետության գլուխ կանգ-

նածները տանում են իրենց քաղաքականությունը, յերբ զենքի կարիք է զգացվում: Բայց բուրժուազիան չի խոստովանում այդ: Ֆարական բանակում դուք այս ճշմարտության մասին չեյիք լսի: Ֆարական ուժիցները աշխատում էյին ապացուցել, վոր բանակը կապ չունի փաղափականության հետ, վոր բանակը փաղափականությունից դուրս է: Ինչո՞ւ յեյին այդպես ասում, լինչն եր դրա պատճառը:

Շատ պարզ... բոլոր սպիտակ բանակները կազմակերպվում էյին բանվորների և գյուղացիների յերիտասարգությունից. նրանց գլուխն եյին կանգնած վորպես ղեկավարներ, բուրժուազիայի վոգով կրթված սպաները: Կճրող էյին, արդյոք, այդ բանվորական և գյուղացիական յերիտասարգությանն ասել, թե դու պաշտպանում ես հողատերերի կամ ֆաբրիկատերերի ու փողատերերի շահերը: Ի հարկե, վոչ: Հակառակ դեպքում Տամբովի գյուղից յեկած զինվորը չի գնա ճնշելու Սարատովի գյուղացիների ապստամբությունը, ոոր բայագեթցին չի գնա ճնշելու ապրատամբած զազախեցուն, յեթե նա գիտակցի, թե ում շահերին է ծառայում: Յեվ բոլոր սպիտակ բանակներում աշխատավորական յերիտասարգության մեները պղծարելու համար, նրանց խա-

բերու համար բանակը անվանում են ազգի շահերը պաշտպանող զինված կազմակերպություն, այն ինչ «ազգի շահերը» խոսքերի սակ թագնված է բուրժուազիայի շահերը...

Միակ բանակը, վորտեղ վոչ միայն այդ միտքը չի թագնվում, այլ և անվերջ շեշտվում է բանվոր և գյուղացի յերիտասարդին՝ դա կարմիր բանակն է:

Բանակը դատակարգային կազմակերպություն է: Մեր բանակը կոչված է պաշտպանելու բանվորի յեվ գյուղացու իշխանությունը. կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգը տանում է իր կատարի կռիվը համաշխարհային հակահեղափոխության դեմ, իր հետ տանելով և գյուղացիական աշխատավորական մասսաները: Վերջնական հաղթանակը մենք կրտենենք այն դեպքում, յեթե այդ պայքարի ընթացքում հանդես բերենք ռազմական պատրաստականություն:

Այս հիմնական տարբերությունը սպիտակ և կարմիր բանակների մեջ պետք է պարզ լինի բոլորիս համար:

«Առանց մեր սոցիալիստական հանրապետության զինված պաշտպանության մենք գոյություն ունենալ չենք կարող» — ասում է ընկ.

Հենինսը: Սա պետք է գիտակցի վոչ միայն բանակում գտնվող կարմիր բանակայինը, այլ և ամեն մի գյուղացի ու բանվոր:

Այս հիմնական մտքերը հասկանալուց հետո, դժվար չի լինի պարզել, թե ի՞նչու մեր հրամանատարները նշանակվում են բանվորներից և գյուղացիներից, ինչո՞ւ բոլոր ռազմական դպրոցներում սովորում է նախ և առաջ բանվորագյուղացիական յերիտասարդությունը:

Զենի կրելը մեր Խորհրդային հայրենիքում մեծ պատիվ է ու խոշոր արժանություն: Այդ իրավունքը ունի միայն պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը: Այդ իրավունքից զուրկ են բոլոր անհարգատ տարրերը:

Դասակարգային Կ.-բանակը պետք է ունենա և նույն դասակարգից դուրս յեկած, իր դասակարգի շահերին նվիրված կարմիր հրամանատար: Միայն այդպիսին կարող է հաջող տանել յերիտասարդների ռազմական կրթության գործը: Հրամանատարից է կախված, թե վճռափ պատրաստ կըլինի բանակը ռազմականապես: Մեր Կ.-բանակի հաջողությունների մի զգալի մասը պետք է բացատրենք հրամանատարական կազմի տոկոսնությամբ և նրա անձնվիրությամբ:

Բայց այս դեռ բոլորը չէ:

Նախկին ցարական բանակի զինվորին պահում էին սգիսության յեվ խավարի մեջ (ինչպես յեվ բանվորին ու գյուղացուն): Նրան դարձնում էին անլեզու, զրկում քաղաքացու բոլոր իրավունքներից: Նա միայն գործիք էր տիրողի ձեռքին: Նախկին դաշնակցական բանակում պոստում էին յերիսասարդի միսֆր հեֆյաթներով «ծովից-ծով Հայաստանի» մասին, իսկ իրենի գրադվում աշխատավորության կաշին փերթելով յեվ անստությունն ավերելով: Նույնն այսօր անում են և մյուս բոլոր սպիտակ բանակներում տերտերների, թերթերի, զորքերի և այլ միջոցներով:

Այդ բանը դուք Կարմիր բանակում չեք տեսնի:

Կոմունիստական կուսակցությունն իր ույծերը չի խնայում գիտակից դարձնելու ամեն մի կարմիր բանակային: Մենք բանակում ունենք հատուկ քաղաքական աշխատողներ: Նրանք ձեռք-ձեռքի տված ռազմական զործի ուսուցիչներն են—հրամանատարների հետ պատրաստում են բանակայինից ռազմականապես կրթված, քաղաքականապես գիտակից հեղափոխության մարտիկներ:

Նախկին ցարական և դաշնակցական կառու-

վարություններից մեզ ժառանգություն է մնացել աշխատավորության անգրագիտությունն ու հետամնացությունը:

Իսկ «անգրագետ մարդը կանգնած է փաղափականությունից դուրս, նրան նախ անհրաժեշտ է սովորեցնել այնպիսին» — ասում է ընկ. Լենինը:

Ահա ինչու քաղաքական անգրագիտության դեմ տարվելիք կռվի հետ միասին տարվում է և այբուբենական անգրագիտության վերացման աշխատանքները: Բանակայինը գալիս է անգրագետ, վերադառնում՝ զրազետ: Նա յուրացնում է վոչ միայն քաղաքական առարկաները, այլ և սովորում է կարդալ, գրել, հասկանում է աշխարհագրությունն ու բնագիտությունը: Բանվորների յեվ գյուղացիների պեսության ռահերի ներդափնայության պատկանության գործը չի կարելի հանձնել հետամնաց բանվորներին:

Այս բոլոր առաջներից հետո զարմանալի չէ և այն փոխ-հարաբերությունը, վորը տեղի ունի հրամանատարների, քաղաքական աշխատողների և կ.բանակայինների միջև:

Կանչեցեք նախկին զինվորներից մեկին ու մեկին և նա ձեզ կը պատմի այն հեգնանքի, արհամարանքի և ծեծի մասին, վոր գոյություն ունեյին նախկին բանակում և այժմ գոյություն

ունեն սպիտակ բանակներում զինվորի վերաբերմամբ:

Մեր բանակում միանգամայն բացակայում են թե հեգնանքը դեպի կ. բանակայինը, թե արհամարանքը. բացակայում են և նրանք, ովքեր այդպիսի գործով եյին զբաղվում:

Դիսցիպլինա (կարգապահություն) ունենալու միջոցը նախկին ոճիցներերը տեսնում եյին զինվորի անգիտակցության յեվ անվերջ խտությունների գործադրման մեջ: Բնդնականակը՝ մեր բանակը միանգամայն այլ հիմքերի վրա յե կառուցված: Մեր զիսցիպլինան վոչ մի նմանություն չունի սպիտակ բանակայինի դիսցիպլինայի հետ: «Կարգապահության բոլոր հին միջոցները յեվ նրա գործադրության բոլոր աղբյուրները վոչնչացված են, մեր գործունեության հիմքում մենք դրել ենք միայն վերին աստիճանի բարձր գիտակցություն» — ասում է ընկ. Լենինը՝ Կոմունիստական կուսակցության մեջ գոյություն ունեցող զիսցիպլինայի մասին. նույնը պետք է ասել և մեր բանակի կարգապահության մասին: Առանց կարգապահության կը փանդվի վոչ միայն բանակը, այլ յեվ ամեն մի, թեկուզ փոքր, տնտեսություն:

Մեր հեղափոխության և ուրեմն կարմիր

բանակի թշնամին է ամբողջ աշխարհի բուրժուազիան: Սպասվող պատերազմների ընթացքում մեր հաղթանակը կախված է մեր գիտակցությունից, մեր կազմակերպված լինելուց, մեր կարգապահությունից: Այս հանգամանքը հասկանում են թե մեր հրամանատարները, թե քաղաշխատողները և թե կարմիր բանակայինները: Բայց մեր բանակը միայն մեր հեղափոխության պաշտպանը չէ, նա Համաշխարհային Հոկտեմբերի առաջապահն է: Միահամուռ ույժերով, զիտակցելով բանակի անհրաժեշտությունը, մենք պետք է լծվենք նրա շինարարության գործին: «Ամեն մեկը, ով լրջորեն ցանկանում է ազատվել... պարսավոր է իր բոլոր ույժերը, բոլոր միջոցները, բոլոր ընդունակություններն ամբողջովին տրամադրել Կարմիր բանակի կառուցման յեվ ուժեղացման գործին» — գրում է մեր ղեկավար՝ ընկ. Լենինն իր մի նամակում, ուղղված բանվորներին և գյուղացիներին: Թող մեզանից ամեն մեկը տեսնի, թե ինչպիսի խոշոր նշանակություն էր տալիս Լենինը բանակի գոյությանը:

Բայց չե՞ վոր յերիտասարդության շինարարական աշխատանքից կտրվելը ազդում է մեր ամբողջ տնտեսության բարձրացման գործի վրա:

ի հարկէ, ազդում ե, և այդ հանգամանքը շատ
պարզ գիտակցում է խորհրդային իշխանությու-
նը: Բա, ինչպես անել: Կարող ենք բանակ չու-
նենալ: Վոչ. չենք կարող, մեր քանակները բա-
նակ ունեն: Մի քանի անգամ խորհրդային իշ-
խանության ներկայացուցիչները բանակի կըր-
ճատման հարցը դրել են, բայց կապիտալիստական
յերկրները լսել անգամ չեն ուզում: Նրանք վա-
խենում են, վոր առանց բանակի մի որ ան-
գամ չեն կարող գոյութիւն ունենալ. վոր ի-
րենց յերկրի բանվորները և գիտակից գյուղա-
ցիները կըփշրեն նրանց իշխանությունը:

Զնայած դրան՝ խորհրդային իշխանությու-
նը կըճատեց իր բանակը, մոտավորապես 5—6
միլիոնից հասցրեց վեց հարյուր հազարի: Բայց
մեր թշնամիները դեռ վերջնականապես հաղ-
թրված չեն: Զինված հարձակումներ նրանց կող-
մից մենք միշտ պետք է սպասենք: «Բանակի
կրհասումը պէտք է ըստ յերաւիսիք, վոր մենք հարկ
յեղած դեպքում վոսքի կը կանգնացնենք յեւ գո-
րակոչի կը յենթարկենք եւ ավելի մեծ զինվորա-
կան ույժ» — ասում է ընկ. Լենինը: Իսկ ինչ-
պես պետք է զինակոչի յենթարկել ավելի մեծ
ույժ: Միայն այն դեպքում, յերբ մասսաները
նազմական պատրաստականութիւն ունենան:

Գործարանում թե դաշտում աշխատող բանվորն
ու գյուղացին պետք է միշտ պատրաստ լինեն
հարկ յեղած դեպքում բանակ գալու:

Յեւ վորպէսզի աշխատավորն աշխատան-
քից չը կտրուի յեւ ուղարկուի գործը սովորի, ո-
գոստոս ամսում 1923 թ. Ս.Ն.Հ.Մ. Գործադիր Կո-
միտեն կայացրել է մի վորոշում յերկրային (աեր-
րիտորյալ) զորամասերի վերաբերմամբ: Այսպիսով
մենք հնարավորութիւն ենք ստանում, տանելով
մեր առորյա աշխատանքները և քիչ ժամանակ
կտրվելով գործից՝ սովորել նազմական գործը: Բայց
աշխատանքը նոր է և դժվարին: Մենք կարող ենք
հաջողութեան հասնել միայն այն դեպքում, յեթե
բոլորս քնդառաջ գնանք այդ գործին, լուրջ վերա-
բերմունք ցույց տանք: Այստեղ գործի հաջողութիւն-
ը կախված ենք նրանից, թե ինչպիսի յեռանդով կվե-
րաբերվի աշխատավորութիւնը՝ ինչպես կը մոտե-
նան հարցին գյուղխորհուրդները, վերջապէ գյուղ-
բշիջները կզբաղվեն այդ հարցով, կըսարգարանեն
նրա նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը:

Յեղած փորձը յերկրային զորամասերի շի-
նարարութեան գործում ասում է նրա ողորակե-
տութեան մասին:

Կըզանվեն ընկերներ, վորոնք կըմտածեն, թե
կարելի չէ ամբողջովին անցնել յերկրային զո-
րամասերի, չունենալով կադրային մասեր: Այդ
սխալ կարծիք է. չէ՞ վոր պետք է ունենալ մի
պատրաստ ույժ, վոր յեղած դեպքում կարճ ժամանա-
կամիջոցում կը դնուի թշնամու առաջին հար-



վածներին: Դրա համար մեզ անհրաժեշտ են
կադրային (կազարմայում դասվող) զորամասեր:
Միայն նրանց թիկունքում, նրանց պաշտպա-
նություն տալ, հնարավոր է կատարել մասսայա-
կան ռազմական պատրաստականության դործը:
Կրնշանակի՝ մենք դեռ զորանոցում հավաք-
ված զինվորներ պետք է ունենանք: Այդ ըն-
կերներին ստիպված ենք կտրելու իրենց աշխա-
տանքից: Խորհրդային իշխանությունը մի շարք
միջոցներ է ձեռք առել պահպանելու և ուժե-
ղացնելու նրանց անտեսությունը: Բանակային-
ցեղին տրված է մի շարք արժանություններ: Ա-
մեն մի զիսակից գյուղացու պարսականու-
թյունն է ոգնել զինակոչի յեմքարկված բն-
կերներին: Ամեն մի գյուղխորհուրդ պետք է իր
ամբողջ ուժով դործադրի փաստերով համոզելու
բոլորին, վոր Հնայած բանակայինը բացակայում
է գյուղից, նրա անտեսությունը չի բանդվում,
նրան ոգնություն է գալիս գյուղը: Այս շատ կա-
րեւոր է: Այսպիսով բանակում գտնվող յերի-
տասարդությունը կարող է հանդիստ զբաղվել իր
ռազմական և քաղաքական պատրաստականու-
թյամբ: Յեթե ռազմական գիտելիքները մենք
կրգործադրենք պատերազմի դաշտում, ապա Բա-
ղափական պաշարը, վոր ստանում է բանակա-
յինը, նա կրգործադրէ գյուղում կամ քաղաքում
արդյունաբերության մեջ:

Կարմիր բանակը կրթելու մի վայր է: Կար-
միր բանակից դուրս յեկած Կ-բանակայինն իր

հետ բերում է և զգալի քաղաքական պատրաս-
տականություն: Նա արդեն գիտե կարգալ թերթ,
նա պարզ պատկերացնում է մեր ընդհանուր
դրությունը, նա գաղափար ունի քաղաքի և գյու-
ղի կապի անհրաժեշտություն մասին, կոոպերա-
ցիայի մասին: Նա ոգովել է Կարմիր բանակում
քաղաքացու բոլոր իրավունքներով և գիտի ձև
և ինչպես պետք է ընտրել խորհուրդների մեջ:
Նա տեղեկություններ ունի այն մասին, թե ինչպես
բարձրացնել հողի մշակումը, անտեսությունը:

Այս բոլոր նրա գիտելիքները պետք է ոգ-
տագործել: Մեր խորհրդային և հասարակական
աշխատանքները գյուղում գլխավորապես տուժում
են աշխատողներ չըլինելու պատճառով: Դա մեր
ընդհանուր դժբախտությունն է: Այս հանգամանքը
պետք է ինչպես ունենալ: Գիտակից, տկուր, կու-
կուսակցության-լեհինիզմի գաղափարները յու-
րացրած բանակայինը պետք է ոգսագործվի, պետք
է դառնա գյուղի անձնվեր աշխատող, Լեհինի
խոսքի տարածող: Այսպես պետք է մտանանք բա-
նակի շինարարության դործին: Ել ավելի ուժեղա-
ցընենք նրան, վորպեսզի հանգիս կերպով գրադ-
վեմ մեր յերկրի վերաշինության գործով: Իսկ
զգում է մեր բանակն այդ ուժեղացման կարիքը:

Բոլոր կապիտալիստական բանակներն ուժեղ
են իրենց տեխնիկայով: Նրանք մեղանից լավ են
զինված, նրանց ռազմական արդյունաբերությու-
նըն ավելի ուժեղ է: Դա բացատրվում է նրանց
յերկրի արդյունաբերության բարձր լինելովը:

Նրանց թույլ կողմը՝ բանվորի և զինակից զյու-
ղացու, վորոնք բերվել են բանակ, թշնամական
վերաբերմունքն է դեպի անհարազատ բուրժու-
ական իշխանությունը:

Մեր բանակի թույլ կողմն է մեր համեմա-
աաբար թույլ տեխնիկան: Մեր բանակն ամուր
է իր զինակցությամբ, իր հեղափոխական վո-
դով: Բայց անհրաժեշտ է ուժեղացնել և ուղ-
մական մատակարարման գործը. իսկ այդ կարե-
ւի յէ անել, բարձրացնելով ամբողջ յերկրի տնտե-
սությունը, նրա արդյունաբերությունը:

Թող ամեն մի բանվոր, ամեն մի գյուղա-
ցի համազվի, վոր մի նոր արդյունաբերական
ձեռնարկություն, մի նոր ջրանցք, մի դեսյասին
սովեյի ցանած հող՝ այս բոլորը նեան է յերկրի
սննեսական զարգացման. իսկ յեթէ յերկիրն ու-
ժեղ է սննեսապես՝ ուժեղ է յեւ բանակը սեխ-
նիկապես: Իսկ այս անհրաժեշտությունը մի
քանի անգամ ասել է ընկ. Լենինը՝ «Մենք ուղ-
մականապես պե՛սք է պատրաստ լինենք ամեն մի
բոլոր, չսարվելով մեր՝ իմպերիալիզմին հասցը-
րած հարվածներով. մենք մեր Կարմիր բանակը,
ինչ զնով էլ ուզում է լինի, պե՛սք է պատշաճա-
կենք իր ամբողջ ռազմական պատրաստությամբ
յեւ ուժեղացնենք նրա ռազմականությունը»:

Այս է ասել Լենինը. նրա այս խոսքերը չը-
պետք է մոռանանք մեր շինարար յեռուն աշ-
խատանքի մեջ, վորովհետեւ մոռանալ այդ՝ նը-
շանակում է վստակ չլինել մեր բոլոր նվա-
նումները:



40.992

106
ԴԻՆԸ 8 ԿՈՂՆԿ